



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

ԲԱՌԱՁԽԱՅԻՆ ,ԲԱՌԱԳՈՐԾԱԿԱՆ,ԿԱՊԱԿՑԱԿԱՆ

ՄԽԱԼՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԱՌԱՐԿԱ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՀԵՂԻՆԱԿ

ՄԵՐԻ ԱՐԱՐԱՏԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԱՐԶ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

**ԳԼՈՒԽ 1. ԲԱՌԱԶԵՎԱՅԻՆ, ԲԱՌԱԳՈՐԾԱԿԱՆ, ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ.....5**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....12

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ժամանակակից գրական հայերենի լեզվական կառուցվածքի տարբեր մակարդակներում գործառուում են զգալի քանակով տարբերակային ձևեր, որոնց քննությունն անհրաժեշտ է լեզվի նորմավորման ընթացքի դիտարկման, նոր ձևավորվող օրինաչափությունների բացահայտման և առհասարակ լեզվի զարգացման միտումների դիտարկման տեսանկյունից: Բառագործածության սխալների ուսուցումը դաբոցում կարևորվում է, քանի սովորողներին սխալները ցույց տալն ու բացատրելը նրանց գերծ կպահի խոսքում նմանօրինակ սխալներ անելուց:

Մասնագիտական գրականության մեջ ձևաբանական նորմ հասկացությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Ձևաբանական նորմը հասարակության կողմից ընդունելություն գտած, բոլորի համար պարտադիր ճանաչված քերականական կարգերի, քերականական իմաստների և նրանց ձևակազմիչ միջոցների համակարգը կարգավորող, օրինակարգավորող կանոնների ամբողջությունն է՝ պատմականորեն, տրամաբանական գործոններով, ավանդությամբ, ճշտությամբ և բարեհնչությամբ ամրապնդված: ...Սովորաբար ձևաբանության մեջ նորմավորման էությունը կանոնների միօրինակության մեջ է, նպատակը՝ միակերպության ձգտումը»¹: Չնայած նշված հանգամանքին՝ հաճախ առաջանում են քերականական շեղումներ կամ սխալներ:

Ի տարբերություն բառապաշարային և շարահյուսական իրողությունների՝ ձևաբանական կարգերի ոճական հնարավորություններն ավելի սահմանափակ են՝ պայմանավորված գրական լեզվի նորմայի պահանջներով: Ձևաբանական մակարդակում արտահայտչականությունը հիմնականում ստեղծվում է տարբեր խոսքի մասերի միջոցով, որոնցից ամենաարդյունավետը, ինչպես նկատում է Ռ. Մկրտչյանը, ձևաբանական միավորների իրավիճակային կիրառություններն են: «Նման դեպքերում,– գրում է լեզվաբանը,– մեծ մասամբ, կատարվում է տվյալ խոսքի մասին բնորոշ արժույթային կապերի խախտում, որը և հնարավորություն է տալիս խոսողին արտահայտել իր հույզերը և վերաբերմունքը»²: Ասել է թե՛ ձևաբանական իրակությունը ձեռք է բերում ոչ սովորական կիրառություն՝ միաժամանակ ստանալով ոճական արժեք:

Լեզուն քարացած կանոնների ամբողջությունն չէ: Լեզվում զուգաձևությունների առկայությունը առաջ է բերում նորմավորման, զուգաձևերի համապատասխան գնահատության անհրաժեշտություն, և այդ նպատակով կատարված հատուկ, նպատակադիր ուսումնասիրությունները լեզվի մշակույթի համար

ունեն առաջնահերթ նշանակություն³: Ոչ բոլոր գույքաձևություններն են դիտարկվում լեզվական նորմայի սահմաններում և նպաստում գրական լեզվի անարգել զարգացմանը: Նկատի ունենալով, որ լեզվի քերականությունը զարգանում է իր ներքին օրենքներով, գույքաձևությունների առումով պետք է կանոնարկման ենթարկել քերականությունը՝ պետք է թույլ չտալ այնպիսի ձևերի գործածությունը, որոնք խորթ են հայերենի քերականական կառուցվածքին, անհարիր են համաժողովրդական լեզվական մտածողությանը, շփոթում ու խեղաթյուրում են հայոց լեզվի ներքին օրենքները և խանգարում նրա զարգացմանը:

Բառաձևային, բառագործական, կապակցական սխալները խոչընդոտում են սովորողի խոսելու, հաղորդակցվելու, կարդալու և գրելու կարողությունների ձևավորմանը, զարգացմանը և ամրապնդմանը: Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նշված հիմնախնդիրների վրա շեշտը դնելու և հայոց լեզուն անաղարտ պահելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ: Հայոց լեզվի ուսուցման ժամանակ սովորողների բանավոր և գրավոր խոսքի ձևավորման և զարգացման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. ուսումնասիրել և վերծանել հայոց լեզվի ուսուցման, մասնավորապես, սովորողների կարողությունների ձևավորման ու զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները,
2. բացահայտել նշված խնդիրները և կատարել կանխման արդյունավետ ուղիներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Ուսումնասիրվել և դիտարկվել են հայերենի բառաձևային, բառագործական, կապակցական սխալները և դրանց ուսուցմանը կարևորություն և մեծ տեղ է տրվել:

Հայերենի ուղղագրության և ուղղախոսության ուսուցման ժամանակ, սովորողի կարողությունների ձևավորման և ամրապնդման ժամանակ առաջարկված հնարները կնպաստեն գիտելիքների զարգացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ԵՆ՝

- հիմնախնդրի վերաբերյալ տեսական գրականության վերլուծություն,
- զրույց,
- գործնական աշխատանքներ,
- խմբային քննարկումներ :

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ և ԾԱՎԱԸ

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից , մեկ գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականությունից:

ԳԼՈՒԽ 1

ԲԱՌԱԶԵՎԱՅԻՆ, ԲԱՌԱԳՈՐԾԱԿԱՆ, ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ձևաբանական նորմով սահմանված օրինաչափություններից շեղումներ, անընդունելի և սխալ կիրարկություններ են ի հայտ գալիս հատկապես գոյականի թվի, հոլովի, առկայացման քերականական կարգերում:

Բառագործածության և քերականական, կապակցական սխալները ուսուցանելիս նախ պիտի ցույց տալ սխալը, այնուհետև ներկայացնել լեզվական նորման: Հնարավոր է նաև ընտրել համեմատության և հակադրման մեթոդներ՝ սխալ տարբերակին զուգահեռ ներկայացնելով ճիշտ տարբերակը:

Հոգնակի թվի կազմության և՛ հնչյունական–հնչյունափոխական, և՛ քերականական–ձևաբանական սխալ է առկա հետևյալ օրինակում՝ «*Կովկասի բոլոր ժողովրդներին՝ խաղաղություն, աշխարհի բոլոր ժողովրդներին՝ ժողովրդավարություն*»: Ու ձայնավորի հնչյունափոխությունն ընդունելի է տվյալ բառի հոլովման ժամանակ (ժողովրդի, ժողովրդից և այլն), բայց ոչ հոգնակիակազմության դեպքում: Այստեղ պետք է հնչեր *ժողովուրդներին* ճիշտ բառաձևը:

Հետևյալ օրինակը վերաբերում է գրաբարում և ձայնորդով վերջացող գոյականի հոգնակի թվի կազմությանը՝ «*Մարգում մնացած երիտասարդներին կարելի է հաշվել մատերի վրա*»: Անշուշտ, պետք էր վերականգնել և բաղաձայնը և հոգնակին կազմել *մատներ* ձևով, հմմտ.՝ *մատների վրա*: Կամ՝ *ոտների* խոսակցական բառաձևի փոխարեն պետք է գործածվի ոտքերի բառը:

Երբեմն անհոգնական գոյականները հանդես են գալիս հոգնակի թվով, ինչը ևս ձևաբանական նորմից շեղում է, ինչպես՝ «Ռուբիկոնը կներկայացնի «Գոհարի» հետագա գործունեությունների մասին: *Գործունեություն* բառն անհոգնական գոյական է, այստեղ պետք է հանդես գար միայն եզակի ձևով:

Այլե (է) հնչյունափոխությունը բարբառներին, ժողովրդական խոսքին բնորոշ իրողություն է, օրինակ՝ «-*Դրան էլ ուրիշ նար չկա, - ձեն տվին էս ու էն կողմից*»:

Հայտնի է, որ հայերենում գոյականի հոլովման համակարգում կարող են ի հայտ գալ զուգաձևություններ և բազմաձևություններ: Հոլովական համակարգում զուգահեռ ձևերը և լեզվական նորմից կատարված շեղումները հիմնականում հետևանք են խոսակցական լեզվի ազդեցության, նաև տարբեր հոլովումների փոխադարձ ներթափանցման, նմանակության, մասամբ էլ բարբառների անմիջական ազդեցությամբ են պայմանավորված:

Հոլովական օրինաչափական ձևերից շեղումներ կատարվում են նաև այն պատճառով, որ տարբեր հոլովումների պատկանող բառերի միջև որոշակի հատկանշային տարբերություններ չենք կարող ներկայացնել. տարբերություններ, որոնցով առաջնորդվելիս որոշվի տվյալ բառի հոլովումը⁴:

Հոլովական համակարգի ընդունված նորմերից շեղումները բազմազան են: Հմմտ. «Մարդիկ հանույքով դիտում են ամեն մի շարժման»: Շարժում բառը՝ որպես իրանիշ գոյական, հայցական հոլովում պետք է լինի ուղղականաձև. դիտել շարժումը: «Պապու մասին պատմում է...»: Պապ բառը ենթարկվում է ի ընդհանրական հոլովման՝ պապի, պապի(ն), պապից և այլն: Գրական հայերենում տվյալ բառը ի/ու հոլովական գուգաձևություն չունի: Խոսակցական ոճին է բնորոշ պապի բառը, որից էլ պապու, պապուց (խակց.) ձևերը:

Որակական ածականները ցույց են տալիս առարկայի ինքնին ունեցած հատկանիշ: Նրանց մեծ մասն ունի համեմատության աստիճաններ: Հարաբերական ածականներն առարկայի հատկանիշն արտահայտում են մեկ ուրիշ առարկայի հարաբերությամբ, նրա միջոցով և չունեն համեմատության աստիճաններ:

Օրինակ՝ «Ֆրանսիա տեղափոխվելը շատ ճակատագրական կարևորության որոշում էր նրա համար»: «**Ճակատագրական**» ածականը չունի համեմատության աստիճաններ, չի կարող գործածվել **սաստիկ, չափազանց, շատ, խիստ, շատ-շատ** և չափի ու աստիճանի իմաստ ունեցող այլ բառերի հետ:

Դիտարկենք «ահավոր շատ սխալ», «շատ հնագույն փողոց» կապակցությունները: Պետք է լիներ՝ **չափազանց՝ սաստիկ շատ**: «Շատ» բառի և -գույն ածանցի համատեղ կիրառությունն անընդունելի է: Պետք է լիներ կա՛մ շատ **հին**, կա՛մ **հնագույն**: Բացարձակ գերադրական աստիճանի վրա ամենա-նախաձանցի սխալ հավելման և կրկնակի գերադրության օրինակ է առկա «Ամենալավագույն ցանկություններով բարեմաղթում եմ նորանոր հաջողություններե (հեռուստ.) նախադասության մեջ»⁵:

Հմմտ. նաև ածականի կազմությանն առնչվող հետևյալ սխալը՝ «նեապոլիտանական երգեր»: Ռուսերենի օրինակով կազմված և գրական հայերենում ածականական մերժելի բաղադրություն է առկա այստեղ: Պետք է լիներ՝ նեապոլյան:

Եթերում սակավադեպ չեն նաև թվականների գործածության սխալները: Հմմտ. «Այսինքն՝ Մինսկի խումբը փոփոխությունների կենթարկվի, կհամարվի, և այն առաջարկությունները, որոնք արվել են տաս տարիների ընթացքում, նույնպես կփոխվեն»: Պետք է լիներ՝ «Այսինքն՝ Մինսկի խումբը փոփոխությունների կենթարկվի, կհամարվի, և այն առաջարկությունները, որոնք արվել են տասը տարվա ընթացքում, նույնպես կփոխվեն»:

Հի(ց)ուն արտասանությունը սխալ է, ճիշտը հիսուն ձևն է: Վաթսունի և ութսունի թ-ն արտասանում են ց՝ վա(ց)ուն, ու(ց)ուն, որը նույնպես սխալ է, պետք է արտասանել վաթսուն, ութսուն: Հարյուրի արտասանության ժամանակ պետք է -ր -ից հետո հնչի -յ-ն, ինչը շատ հաղորդավարներ սղում են՝ հինգ հարուր , հարուր տոկոս, երեք հարուր հազար, հազար ինը հարուր տասնութ- երեք հարյուր հազար, հազար ինը հարյուր տասնութ⁶:

Դասական թվականները (-երորդ վերջածանցը ավելանալու դեպքում) արտասանում ենք քսան(ե)րկու(ե)րորդ, երեսուն(ե)ր(ե)քրորդ, յոթ(ե)րորդ: Դասական թվականների հետ արտասանական խախտումներ հաճախակի են հանդիպում՝ քառասունչորս(յե)րորդ), քառասուն(յե)րեք(յե)րորդ, ոչ թե հարուրական, այլ հարյուրական և այլն:

Ունենք **տասը** թվականը, որի **տաս** ձևը խոսակցական ոճին է պատկանում, գրական նորմի մակարդակում գործածվում են **տասը** (բաղաձայնով սկսվող բառերի հետ) և **տասն** (ձայնավորով սկսվող բառերի հետ) ձևերը, հմմտ. տասը գիրք, տասն արդուկ: Միսլ է՝ *տաս մարդ –տասը մարդ*: Միսլ են՝ *վեցը տարվա ընթացքում, ութը ամսվա կտրվածքով– վեց տարվա, ութ ամսվա*:

Կենդանի խոսքում «հատկապես դերանվանական շեղումներն են մտքի աղարտման պատճառ դառնում, աննպատակ ու ավելորդ կրկնաբանություններն են ծանրաբեռնում խոսքը, սխալ դերանվանագործածություններն ու ոճական անճշտություններն են աղավաղում լեզուն, ուստի և դերանուններից յուրաքանչյուրի տեղին օգտագործումը, նրբանկատ ընտրությունը, մայրենի լեզվի դերանվանական համակարգի կանոնակարգով առաջնորդվելը ճիշտ խոսելու լավագույն միջոցներից են»⁷:

Ինքը դերանվան սեռականն է՝ եզակի թ.՝ իր, հոգնակի թ.՝ իրենց, տրականի ձևերն են՝ եզակի թ.՝ իրեն, հոգնակի թ.՝ իրենց: Հմմտ. հետևյալ սխալ գործածությունը. Իրա էմոցիաները-իր հույզերը: Ուշագրավ է Խ. Բաղիկյանի այն դիտարկումը, որ «գրեթե միշտ ռադիո և հեռուստատեսային հաղորդումների ժամանակ կարելի է լսել այսպիսի նախադասություններ՝ «Դու քո սխալ կարծիքը ես պնդում, ես իմ ճիշտ տեսակետս եմ արտահայտում»: Ակնհայտ է, որ իմ-ի և ս-ի, քո-ի և դ-ի համատեղ գործածությունը նույնպես գրական լեզվի նորմայի խախտում է (ոչ թե իմ գիրքս, քո գիրքդ, այլ գիրքս կամ իմ գիրքը և գիրքդ կամ քո գիրքը»⁸:

Հաճախ **բանն այն է** կապակցության փոխարեն գործ են ածում **բանը նրանումն է** արտահայտությունը, որը գրական լեզվի նորմայի սահմաններում հարազատ չէ մեր ժողովրդի լեզվամտածողությանը, այն օտարաբան կառույց է և ուղղակիորեն ռուսերենի **Что? С чем?** բառակապակցության անմիջական, ուղղակի պատճենումն է: Երբեմն այդ կապակցությունն ավելանում է նաև **կայանում է**, որով նշված արտահայտությունն առավել ևս դառնում է օտարաբան և մերժելի: Սա պարզապես լեզվական անհարկի ավելորդություն է, քերականական օտարաբանություն՝ **բանը կայանում է նրանում** (փոխանակ՝ **բանն այն է**)⁹:

Նման պատճառաբանությամբ հանձնարարելի չէ նաև «**բանն ինչումն է**» կապակցության մեջ «ինչ» դերանվան ներգոյականի գործածությունը, առավել ևս՝ նրան համապատասխան «**բանը**

նրանումն է» կապակցությունը, որը ցավոք շատ է տարածված ոչ միայն բանավոր, խոսակցական լեզվում, այլև գրական լեզվի տարբեր ոլորտներում: Ոճական երանգավորման առումով համեմատաբար չեզոք են փոխադարձ դերանունները, որոնք կարող են հանդես գալ զուգահեռ ձևերով, տարբերակվել կիրառության համապատասխան ոլորտներով: Այսպես՝ *իրար, մեկմեկու* ձևերը ավելի գործածական են խոսակցական լեզվում, իսկ *միմյանց, մեկմեկի* ձևերը ավելի գրքային են ու գրական:

Լեզվական նորմայի փոփոխություններից առավել նկատելի են խոնարհման համակարգի քերականական սխալները: Այդ փոփոխություններն հիմնականում արտահայտվում են քերականական որոշ հնացած ձևերի վերացմամբ, նորերի առաջացմամբ, զուգահեռ ձևերի վերացմամբ կամ նրանցից մեկի արմատացմամբ: Լեզուն, ձգտելով հասնել միօրինականացման, հնարավոր սահմաններում հրաժարվում է զուգահեռ ձևերից՝ ընտրելով հատկապես այն ձևերը, որոնք համապատասխանում են լեզվի զարգացման տվյալ շրջանի միտումներին: Ըստ Գ. Ջահուկյանի՝ զուգաձև տարբերակներից մեկը կապված է լեզվի մեջ գործող նվազագույն ճիգի և դրան զուգահեռ՝ ավելցուկայնությունից խուսափելու միտման հետ: Երբ լեզվի մեջ միևնույն իմաստն արտահայտվում է մեկից ավելի միջոցներով, ապա առաջանում է դրանցից մեկը ըստ հնարավորին վերացնելու միտումը¹⁰:

Հրամայական եղանակի եզակիի ձևերը կազմվում են ԻԲ, Ա, ՈԻ վերջավորություններով: Իր վերջավորությունն ստանում են Ե խոնարհման պարզ ու սուկածանցավոր և Ա խոնարհման սուկածանցավոր բայերը, ըստ որում՝ Ե խոնարհման պարզ բայերն այդ վերջավորությունը ստանում են անկատարի, իսկ մյուս բոլոր բայերը՝ կատարյալի հիմքի վրա: Հրամայական եզակիում ա վերջավորություն են ստանում Ա խոնարհման պարզ բայերը, ըստ որում՝ վերջավորությունը դրվում է անկատարի հիմքի վրա: Հրամայական եզակիում ու վերջավորություն են ստանում պատճառական բայերը: Բոլոր բայերի հոգնակի հրամայականը կազմվում է -եք վերջավորությամբ, որը ավելանում է կատարյալի հիմքին¹¹: Լայնորեն սկսվեցին կիրառվել ի-ով տարբերակները՝ իր-ի փոխարեն, ինչպես օրինակ՝ *մի՛ստիպիր* արգելական հրամայականի բայաձևի փոխարեն Խեչոյանը գործածումը է *մի՛ստիպի* բայաձևը, դիտարկենք օրինակը. «**Մի ստիպի, որ մենք նստեցնենք**»:

Թե՛ պարզ, թե՛ անցանցավոր բայերի հոգնակի հրամայականը կազմվում է կանոնավորապես անցյալ կատարյալի հիմքի վրա ավելացնելով -եք վերջավորությունը՝ *վազել –վազեք –վազեցե՛ք, մոտենալ –մոտեց –մոտեցե՛ք, հասկանալ –հասկաց –հասկացե՛ք, փախչել –փախ –փախե՛ք* և այլն:

Բայական շեղումների առաջացման պատճառներից մեկն էլ անցանցավոր և անանցանցավոր բայերի գործածություններն են: Նմանօրինակ զուգաձևությունները վկայված են նույնիսկ լեզվի հնագույն շրջաններում: Այդ զուգաձևություններից շատերը, ինչպես վկայում է Ս. Աբրահամյանը, «զուգահեռաբար վկայված են 5-րդ դարի մատենագրության մեջ (*ուռնուլ //ուռչել, պակնուլ //պակչել*,

սարսնուլ //սարսնել, խրտնուլ // խրտնել), չ-ով ձևերից մի քանիսը վկայված են համեմատաբար ուշ շրջանից (գարթել, ցասել): »¹²:

Նկատելի է, որ լեզվի զարգացման ներկա շրջանում, հատկապես բանավոր խոսքում, հաճախ գործածվում է -չ- սուկաձանցի անկումով առաջացած անորոշ դերբայի մի տարբերակ: Բայերի հիմքափոխության այդ երևույթը, այլ կերպ ասած՝ ուռնել, սառնել, թռնել, կայել, կորչել բայերի փոխանցումը անհասկանալի բայերի շարքը պայմանավորված է -չ-աձանցի անկայունությամբ, օրինակ՝

1. *Քոռ բու է, կպել է քարին, սատկել է:*

2. *Խեղառ Սիմոնը հավատում էր դռան փակ լինելուն, երկու ամիս նստում էր եկեղեցում, մինչև որ նրա միջից կորում էր շրջագգեստ քարձրացնելու ցանկությունը:*

Թռնել բայը գուգաձևություններ է առաջացնում չ –ն-ի վերածումով: Աձանցի փոխանցման երևույթը գրաբարին բնորոշ առանձնահատկությունն էր, որ պահպանվել է ժամանակակից հայերենում: Թռնել, փախչել, հանգչել բայերը գուգաձևություններ են կազմել նաև գրաբարում: Նշված ձևերից կանոնական են, բնականաբար, աձանցով ձևերը, իսկ հակադիր եզրերը բնորոշ են նաև ժողովրդախոսակցական լեզվին և որոշ առումով նմանականության օրենքի արդյուն է: Առաջանում են հիմքափոխական գուգաձևություններ, որոնք լեզվական նորմայից շեղումներ են: Դիտարկենք օրինակներ.

1. Գերին առանց ետ նայելու, շիկացած օդի լռության մեջ, տեսավ նրա շարժումը, որ հիմա դուրս կքաշի..., ու արճճե թիթեռն իր կարճ կյանքի տարածությունը **կթռնի**:

2. Ինչ մեծ բան է, ես չեմ սպասում գորտը քարից ջուրը **թռնի**, նոր տուն կշինենք, հորիցդ էլ չեմ բաժանվի:

3. Գլուխը կբարձրացնի ու **կթռնի**, առջևի ոտներով կբռնի կովի մեջքը:

Հանդիպում են նաև կանոնական ձևեր, ինչպես՝

*Փուչիկի նման թեթև, շենքերի գույզգույն կտուրների վրայով փողոցեփողոց է թռչում օրվա արդեն պղնձագույն, թանձր արևը...: Բոցը **թռչում է** վեր, հետո կրակը պահում են աչքերիս դեմ:*

Հարկ է հրաժարվել պատճառական –ցն աձանցն ունեցող բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևի ոչ կանոնական, նաև ոչ բարեհունչ) կազմություններից: Հմմտ. «Կրկեսային համարներով զարմացրեցին և ուրախացրեցին երեխաներին» –զարմացրին, ուրախացրին: «...Որոնք աղմուկ բարձրացրեցին–աղմուկ բարձրացրին»:

-Ցն աձանցով և տալ բայի հարադրությամբ պատճառականի՝տվյալ դեպքում սխալ հետևյալ կազմությունները՝ «Պատերազմի հետևանքները շարունակում են իրենց զգացնել տալ»: Պետք է լիներ՝ զգալ տալ: Կամ՝ «...Արդյունքները դեռևս իրենց սպասեցնել են տալիս» : Ճիշտ է՝ «...Արդյունքները սպասել են տալիս»: -Ցն աձանցի և տալ բայի համատեղ գործածությունը ենթադրում է մեկին հարկադրել

մի բան անելու մի երրորդ անձի միջոցով: Ինչպես տեսնում ենք, բերված նախադասություններում -ացն և -եցն ածանցներն ավելորդ են:

Վ կրավորական ածանց չի ընդունում տուժել բայը, մինչդեռ հմմտ. հետևյալ սխալ կիրարկությունը՝ «Այդ պատերազմում հարյուրավոր տուժվածներ են գրանցվում»: Պետք է ասվեր՝ տուժածներ:

Լեզվի մաքրությունը խաթարում են նաև համարվում է, հանդիսանում է, կայանում է և նման արտահայտություններով օտարաբան կառույցները: Մրանք հաճախ գործածվում են –է հանգույցի փոխարեն: Այսպես՝ «Հարցը կայանում է նրանում (փոխ.՝ հարցն այն է...), որ Թուրքիան կնվազեցնի բարեկամական հարաբերությունները Ադրբեջանի հետ», «Ղարաբաղը հանդիսանում է Ադրբեջանի դեմ պատերազմող պետություն է) : «Բուրջանաձեն գտնում է, որ նոր կուսակցությունը կշարունակի ՆԱՏՕ-ի հետ ինտեգրվելու ուղեգիծը (փոխանակ՝ Ըստ Բուրջանաձեի կամ Բուրջանաձեի կարծիքով...): Խոսքն այսինչ բանի մասին է պարզ և ճիշտ արտահայտության փոխարեն շատ ենք լսում *խոսքը գնում է* ռուսաբանությունը: Խոսքը չի կարող գնալ: Ճիշտ կլինի ասել՝ խոսք բացվեց, խոսք եղավ: Օրինակ՝ «Խոսքը գնում է այն խնդիրների մասին, որոնք ծառայել են Հայաստանի առջև», «Խոսքը գնում է այն մասին, որ ռուսաստանյան ներդրումները զգալի մակարդակի են Հայաստանում»:

Բավականին տարածված են «*վրա*» կապի սխալ կիրառություններ: Այսպես՝ հայերենի «նվազել», «սիրահարվել» բայերը պահանջում են համապատասխան խնդիր՝ տրական, հայցական հոլովաձևերով, ինչպես՝ *նվազել ջուլթակ, դաշնամուր, դուդուկ, սիրահարվել Անահիտին, Արամին, քաղաքին և այլն, բայց՝ նվազել ջուլթակի, դաշնամուրի, դուդուկի վրա, սիրահարվել Անահիտի, Արամի, քաղաքի վրա* ձևերը սխալ խնդրառություն են, անընդունելի ձևեր, մերժելի քերականական օտարաբանություններ: Մի շարք այլ կիրառություններում «*վրա*» կապը դարձյալ անտեղի գործ է անվում ներգոյական հոլովաձևերի դեպքում համապատասխան հոլովական «ում» վերջավորության փոխարեն:

Այսպես՝ ճիշտ չեն՝ «*Մեր բնակարանը գտնվում է Թումանյան և Աբովյան փողոցների խաչմերուկի վրա*: Կամ՝ «*Ես բնակվում եմ Չարենցի փողոցի վրա*»:

Ճիշտ և ընդունելի են. «*Մեր բնակարանը գտնվում է Թումանյան և Աբովյան փողոցի խաչմերուկում*»: «*Ես բնակվում եմ Չարենցի փողոցում*»: *Դարձյալ սխալ, ոչ տեղին կիրառությամբ «վրա» կապը հաճախ գործ է անվում «մասին», «վերաբերյալ» կապերի փոխարեն, ինչպես՝ «Գիտնականները երկար մտածեցին Սևանը փրկելու խնդրի վրա, բայց՝ առայժմ սպարդյուն»: «Ի՞նչ ես մտածում այդ թեմայի վրա*»: «*Վրա*» կապի նշված կիրառությունները հանդիպում էին դեռևս 70-90-ական թվականների հայ գեղարվեստական արձակում, հատկապես Բաֆֆու, Մուրացանի ստեղծագործություններում, իսկ այսօր բավականաչափ տարածված են գրական լեզվի և՞ գրավոր, և՞ բանավոր – խոսակցական տարբերակներում:

Ռուսերենի անմիջական ազդեցության հետևանքով է նաև «*մոտ*» կապի կիրառությունը տեղի իմաստ ցույց տալու առումով, երբ հեղինակի որևէ ստեղծագործությունը մատնանշելու փոխարեն (ներգոյական հոլովաձևով) գործ է անվում տվյալ հեղինակի անվանման սեռական հոլովաձևը «մոտ»

կապի հարադրությամբ¹³: Այսպես՝ փոխանակ նշելու, որ «Հ. Թումանյանի «Անուշ» պոեմում Մոսին սպանում է Սարդիին, և սպա Անուշը խելագարվում է», ասում են և նույնիսկ՝ գրում «Հ. Թումանյանի մոտ Սարդն սպանում է Մոսիին, իսկ Անուշը խելագարվում է»: Կամ՝ «Նրա մոտ մի միտք հղացավ» (փոխ. նրա մեջ), «Իմ մոտ մի միտք հղացավ», (փոխ.՝ իմ մեջ - գլխում): Հաճախ չարաշահվում և անհարկի է գործածվում «համար» կապը: Հատկապես անորոշ դերբայի տրական հոլովաձևով արտահայտված նպատակի պարագան սովորաբար դրվում է առանց «համար» կապի, ինչպես՝ «Նա գնաց քաղաք՝ սովորելու»: «Նա մեկնեց ամառանոց՝ հանգստանալու» (բայց ո՞չ սովորելու կամ հանգստանալու համար): Կամ՝ նշված կապը հաճախ գործ է ածվում «ինչու՞» հարցական դերանվան հետ, որը դարձյալ ավելորդ է. ինչպես՝ «Դու ինչու՞ համար չես մասնակցում այդ միջոցառումներին» (փոխանակ՝ **ինչո՞ւ չես մասնակցում**)[®]: Որոշ անճշտություններ են նկատելի նաև «հետ» կապի խնդրառության ժամանակ: Այսպես՝ «ժանոթանալ», «հանդիպել» և նման բայերի խնդրառության դեպքում «հետ» կապը գործ է ածվում, եթե կապի խնդիրը անձ ցույց տվող գոյական է, իսկ մնացած բոլոր դեպքերում խնդիրը դրվում է տրական հոլովաձևով, առանց «հետ» կապի, ինչպես՝ **ժանոթանալ քաղաքին, քաղաքի տեսարժան վայրերին, գործողության ծրագրերին**, մինչդեռ մեկ այլ դեպքում՝ **ժանոթանալ ուսանողների, բժիշկների, աշակերտների հետ** և այլն: Նշված կիրառություններում, ինչպես նկատել է Ս. Աբրահամյանը, պետք է նկատի ունենալ, որ միասնության հարաբերությունը ցույց տալու դեպքում ավելի բնորոշ է առարկաների, անձանց փոխադարձ կապը, քան միակողմանի հարաբերությունը, թեև չի բացառվում, բայց, համեմայն դեպս, նկատելի է, որ լեզուն նման դեպքերում ձգտում է գործածել քերականական այլ ձևեր և միասնության հարաբերությունն արտահայտել այն դեպքում, երբ, թեև թույլ չափով, բայց կա փոխադարձություն»¹⁴:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայերենում քերականական և բառագործածական սխալները հիմնականում հանդես են գալիս գոյականական և բայական համակարգերում:

1. Հոլովական համակարգում լեզվական շեղումները պայմանավորված են լեզվական տարբեր օրենքների ներթափանցումներով ու պատմական գործոններով: Հոլովական գուգաձևությունների առաջացման հիմնական պատճառը Ի հոլովման ընդհանրական լինելու փաստն է, ինչպես նաև գրաբարյան կամ բարբառային մի շարք բառաձևերի կիրառությունները: Հոլովի կարգում բավական գործուն են հնչյունական գուգաձևերը: Հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով մեծ թիվ են կազմում Ի և Ու հոլովման պատկանող բառերի թեք հոլովաձևերում: Այստեղ ավանդույթի ուժին և խոսքի սեղմության հատկանիշին հակադրվում է պարզության, բարեհնչության հասնելու ձգտումը:
2. Լեզվական շեղումներ առաջանում են նաև բայական համակարգում: Բայական համակարգում լեզվական շեղումները հիմնականում դրսևորվում են անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում և անկանոն բայերում: Բայի խոնարհման համակարգի ոճական հնարավորությունները զգալի տեղ են զբաղեցնում գրողի ստեղծագործություններում: Այսպես՝ մի շարք անկանոն բայեր անցյալ կատարյալի կազմություններում հանդես են գալիս կրկնակ ձևերով: Այդ բայերի անցյալ կատարյալի բազմաձևությունների առաջացման պատճառը, ըստ որոշ լեզվաբանների, գեղարվեստական գրականությունն է, մասնավորապես 20-րդ դարասկզբի գրողների ստեղծագործությունները:
3. Լեզվական նորմայի փոփոխություններից առավել կիրառական են խոնարհման համակարգում կատարված և կատարվող փոփոխությունները: Այդ փոփոխություններն հիմնականում արտահայտվում են քերականական որոշ հնացած ձևերի վերացմամբ, նորերի առաջացմամբ, գուգահեռ ձևերի վերացմամբ կամ նրանցից մեկի արմատացմամբ: Լեզուն, ձգտնելով հասնել միօրինականացման, հրաժարվում է գուգահեռ ձևերից և բառաձևերի սխալ կիրառություններից՝ ընտրելով հատկապես այն ձևերը, որոնք համապատասխանում են լեզվի զարգացման տվյալ շրջանի միտումներին:
4. Չթեքվող խոսքի մասերի, ածականների, դերանունների համակարգում հանդիպող շեղումները մեծ թիվ չեն կազմում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
2. Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:
3. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969:
4. Աղաջանյան Չ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007:
5. Աղայան Էդ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
6. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Երևան, 2002:
7. Ավետիսյան Յու., Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Երևան, 2011:
8. Բաղիկյան Խ., Ճիշտ խոսենք հայերեն, (լեզվական նորմա): Հայերենում հանախ գործածվող օտար բառերի բացատրական բառարան, Երևան, 2012:
9. Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը, Երևան, 1999:
10. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 284-285:
11. Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանական ոճաբանություն, Ե., 1992:
12. Չահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:
13. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 2006: